ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 օգոստոսի 2024 թվականի N 2483-Ա

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստան Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներով, ուսումնասիրելով ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/100 ծածկագրով գնման Ընթացակարգի /այսուհետ՝ Ընթացակարգ/ պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 2024 թվականի օգոստոսի 23-ի զեկուցագրով ներկայացված «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋԸ

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի Պատվիրատուի ղեկավարին ուղղված 2024 թվականի օգոստոսի 5-ի և 2024 թվականի օգոստոսի 23-ի զեկուցագրերով հայտնել է հետևյալը.

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար 2023 թվականի հոկտեմբերի 31-ին հայտարարված ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Հայկական բնակավայրի մանկապարտեզի կառուցման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/100 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումն (ՀՎՀՀ՝ 06958851; 05546571, գործունեության հասցե՝ ՀՀ գ. Լեռնավան , 9 փ., 17 S; Շիրակ, Ախուրյան Յու. Ղամբարյան 3Ա/9, հեռ.՝ 077621559; 093144294, էլեկտրոնային հասցե՝ account.able@mail.ru ; viktr78@mail.ru), որի հետ 2024 թվականի փետրվարի

7-ին կնքվել է ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/100 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում հատկացվել են ֆինանսական միջոցներ և 2024 թվականի հուլիսի 3-ին ծանուցվել է համաձայնագիր:

Սակայն սահմանված ժամկետում՝ մասնավորապես 2024 թվականի հուլիսի 26-ը ներառյալ չի ներկայացվել մասնակցի կողմից հաստատված համաձայնագրի տարբերակը, ինչպես նաև միակողմանի հաստատված տուժանքի տեսքով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները չի փոխարինվել կանխիկ փողով կամ բանկերի կողմից տրամադրվող երաշխիքով:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումն թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում որոշում է կայացվել միակողմանիորեն ամբողջությամբ լուծել Պայմանագիրը, միաժամանակ առաջարկելով մասնակցի կողմից ներկայացված երաշխիքի տեսքով հայտի ապահովում գանձել, որը ներկայացված է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 6-ին թողարկված բանկային երաշխիքի տեսքով՝ «ԵՐԱՇԽԻՔ ԹԻՎ 22 13 40 246342/10»՝ 14,125,500.00 (տասնչոր միլիոն հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով:

Նշյալի մասին՝ 2024 թվականի օգոստոսի 5-ի գրությամբ տեղեկացվել է նաև Մասնակցին սպասարկող բանկային կազմակերպությանը:

Հաշվի առնելով, որ Մեծամորի համայնքապետարանի և «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումի միջև 2024 թվականի փետրվարի 7-ին կնքված ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/100 ծածկագրով աշխատանքի ձեռքբերման պետական գնման պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված պահանջների համաձայն Մեծամորի համայնքապետարանը 2024 թվականի օգոստոսի 5-ին միակողմանիորեն լուծելով Պայմանագիրը՝ պատշաճ կերպով նույն օրը ծանուցել է «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումին հիշյալի մասին՝ միաժամանակ առաջարկելով սահմանված ժամկետում ապահովել ներկայացված հայտի ապահովման գումարի վճարի գանձումը, սակայն «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից չի ապահովվել վերոնշյալ պահանջի կատարում, առաջարկում ենք «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն և «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումին:

2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը:

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար 2023 թվականի հոկտեմբերի 31-ին հայտարարված ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Հայկավան բնակավայրի մանկապարտեզի կառուցման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/100 ծածկագրով գնման

ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումն (ՀՎՀՀ՝ 06958851; 05546571, գործունեության հասցե՝ ՀՀ գ. Լեռնավան 9 փ., 17 Տ; Շիրակ, ԱխուրյանՅու. Ղամբարյան 3Ա/9, հեռ.՝ 077621559; 093144294, էլեկտրոնային հասցե՝ account.able@mail.ru; viktr78@mail.ru), որի հետ 2024 թվականի փետրվարի 7-ին կնքվել է ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/100 ծածկագրով աշխատանքի կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

2. ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/100 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում հատկացվել են ֆինանսական միջոցներ և 2024 հուլիսի 3-ին ծանուցվել է համաձայնագիր: Սակայն սահմանված ժամկետում՝ մասնավորապես 2024 հուլիսի 6-ը ներառյալ չի ներկայացվել մասնակցի կողմից հաստատված համաձայնագրի տարբերակը, ինչպես նաև միակողմանի հաստատված տուժանքի տեսքով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները չի փոխարինվել կանխիկ փողով կամ բանկերի կողմից տրամադրվող երաշխիքով:

3. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումն թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում որոշում է կայացվել մաիկողմանիորեն ամբողջությամբ լուծել Պայմանագիրը, միաժամանակ առաջարկելով մասնակցի կողմից ներկայացված երաշխիքի տեսքով հայտի ապահովում գանձել, որը ներկայացված է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 6-ին թողարկված բանկային երաշխիքի տեսքով՝ «ԵՐԱՇԽԻՔ ԹԻՎ 22 13 40 246342/10»՝ 14,125,500.00 (տասնչոր միլիոն հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով:

4. «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից չի ապահովվել բանկային երաշխիքի՝ 14,125,500.00 (տասնչոր միլիոն հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով գանձումը:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

Մեծամոր համայնքի ղեկավար Վ. Խաչատրյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվումէ լիացորված մարմնին և մասնակցին: Լիացորված մարմինն մասնակցին ներառում է Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Եթե ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Այսպիսով՝

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար 2023 թվականի հոկտեմբերի 31-ին հայտարարված ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Հայկական բնակավայրի մանկապարտեզի կառուցման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման գնման Ընթացակարգի շրջանակներում «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումն ընտրվել է հաղթող /ընտրված/ մասնակից, որի հետ 2024 թվականի փետրվարի 7-ին կնքվել է ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/100

ծածկագրով աշխատանքի ձեռքբերման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/100 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում հատկացվել են ֆինանսական միջոցներ և 2024 թվականիյ հուլիսի 3-ին ծանուցվել է համաձայնագիր: Սակայն սահմանված ժամկետում՝ մասնավորապես ներառյալ չի ներկայացվել մասնակցի կողմից հաստատված համաձայնագրի տարբերակը, ինչպես նաև միակողմանի հաստատված տուժանքի տեսքով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները չի փոխարինվել կանխիկ փողով կամ բանկերի կողմից տրամադրվող երաշխիքով:

Մասնակցին՝ 2024 թվականի օգոստոսի 5-ին գրությամբ առաջարկվել է հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ 10 աշխատանքային օրվա ընթացում ապահովել բանկային երաշխիքի վճարների գանձումը:

4. Սահմանված ժամկետում՝ «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից չի ապահովվել որակավորման ապահովման՝ բանկային երաշխիքի՝ 14,125,500.00 (տասնչոր միլիոն հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով գանձումները:

5. Ուսումնասիրելով հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացրած հիմքերը՝ «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:

2. «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» կոնսորցիումի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ համաձայն հավելված 1-ի.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2024 թվականի ՕԳՈՍՏՈՍԻ 27
ք.Մեծամոր